Մակեաը չկայ քիւ խօր թուր կէծակին.
Մակեաը չկայ քիւ խօր կիւտիկն[1] ի գլխին.
Մակեաը չկայ քիւ խօր կեօռտիկ[2] Ա.թմանին.
Մակեաը չկայ քիւ խօր քեամաբն ի մէջքին.
Մակեաը չկայ քիւ խօր շլվարն ի ոտին.
Մակեաը չկայ քիւ խօր ճզմէն[3] ի ոտին.
Մակեաը չկայ քիւ խօր խաչ պատարաստին, վերայ աջ թիւին:

162. Էսայ. Պառաւ, էդա ո՞ւտեղն ի:

—Գնա՛, Ցեօվանի վերայ զեօռի, նա կը խանի գիւս:

Էկաւ, Ցեօվանին ադաչից, էսայ.

—Խէրախիւտ խրեօխպէր, խէր չունիմ, էրա խէրութին.
Խէրախիւտ[4] խրեօխպէր, մէր չունիմ, էրա խէրութին,
Խէրախիւտ խրեօխպէր, խէր չունիմ,
Տո՛ւ ըծը Գիւրկիկ Ջալալին.
Խէրախիւտ խրեօխպէր, խէր չունիմ,
Տո՛ւ ըծը թուր կէծակին.
Խէրախիւտ խրեօխպէր, խէր չունիմ,
Տո՛ւ ըծը կիւտիկն ի գլխին.
Խէրախիւտ խրեօխպէր, խէր չունիմ.
Տո՛ւ ըծը կեօռտիկ Ա.թմանին.

Դաւիթ տարաւ էդա զորանն պահեց. ցիր էդա ծին էդա քիւռակն բիրից. տնէն ցխանեց դիւս: Էդա քիւռկուն շատ կը սիրէր: Էդա քիւռկու անուն դրից Գիւռկիկ Ճալալի.

Ճալալ էլ ինչ ի.—Ճալաթ. հանի (այսինքն) ճալաթ. յրմենուն տաս ոտաց տակ. զանիս. սպանիս:

Ցրմեն բան էդա Գիւռկիկ Ճալալուն շանը տուից. ինչպէս որ վարժապետ վարժատուն տղէկնիրու դաս տայ, գիր սովրցրցի:

Որ մեծ Դաւիթ մեռաւ. էլ մարդ չըն կշխընայ մօտանայ էնու. Ցեօվան խորճիկը մէջ գեարը կը լցէր, տանէր հեռուն կը դնէր. որ ծին գլեօխ կոխէր մէջ. կապ կը թէր գլեօխ:

Ցեօվան ինչ օր տուն չընէր. ծին կը մնէր անութը: Մարդ չըր կշխընէր տանը. որ Ցեօվան ճանչցիր էր ձէ՞ն չըր իտայ:

Ցեօվան չըր կշխնէր թիմրի, կը մնէր անթիմար:

Էնքան ժամանակ որ առանց թիմար մնացիր էր. կեղտը մէջ մնացիրէր. անութը մնացիր էր: Ձին շատ էր բարակցիր:

1 Գլխարկ. կտաւէ: 2 Կարճ անթեւ. մաղեպատ հագուստ: 3 Երկարվիզ կօշիկ: 4 Թրբ.=Բարի ինքն ըստինքեան. բարեգուութ.